

ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 9 Յունիսի, 2008

Յ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի ջանքերով Յունիսի 6-ին եւ 7-ին, Գլենդէլի համրային գրադարանում ու Գլենդէլի համայնքային քոլէջում տեղի ունեցաւ «Յայերը եւ յառաջդիմական քաղաքականութիւնը» խորագրով գիտաժողով, որի ընթացքում մտաւորականներ, արուեստագէտներ ու մասնագէտներ ելոյթներ ունեցան համաշխարհային առումով հայութեանն առնչուող քաղաքական, ընկերային ու տնտեսական հարցերի վերաբերեալ: Աւելի քան 200 անձինք, մեծ մասամբ երիտասարդներ ներկայ եղան երկօրեայ սոյն քննարկումներին: Գիտաժողովը հովանաւորուեւ Յայկական մշակութային հիմնարկութեան եւ «KPFK» ռադիօկայանի կողմից: Գիտաժողովի կազմակերպիչ յանձնախմբի անդամ Ռազմիկ Շիրինեանի խօսքերով, գիտաժողովի նպատակն էր ընկերային եւ տարրական իրաւունքների պաշտպանութեանն առնչուող հարցերը լուսարձակի տակ առնել: Նշենք, որ նոյնանման գիտաժողովներ են տեղի ունեցել նաեւ Յարաւային Ամերիկայի եւ Միացեալ Նահանգների արեւելեան շրջաններում:



Յ.Յ.Դաշնակցութեան Սան Ֆրանցիսկոյի «Քրիստափոր» կոմիտէութեան ընկերային յանձնախմբի նախաձեռնութեամբ, Շաբաթ, Մայիսի 17-ի երեկոյան ժամը 8-ին, շուրջ 500 հանդիսականների ներկայութեամբ տեղի է ունեցել Յայաստանի անկախութեան 90-ամեակի տօնակատարութիւնը: Յանդիսութեան բացումը կատարուել է Յ.Ս.Ը.Ս.-ի սկաւտների դրօշի արարողութեամբ եւ ամերիկեան, հայկական ու Յ.Յ.Դաշնակցութեան հիմներգերով: Յիմնականում գեղարուեստական ծրագրերով ներկայացուած սոյն հանդիսութեանը ելոյթներ են ունեցել Սան Ֆրանցիսկոյի «Յամազգային»-ի «Արեւի» եւ Սք. Անդրէաս եկեղեցւոյ «Արաքս» պարախմբերը, «Սոււնդուկեան»-ի անուան թատրոնի դերասաններից, ասմունքող Գրիգոր Օզարեանը եւ ազգային, յեղափոխական երգերի մեկնաբան Գառնիկ Սարգիսեանը:



Յինգզաբթի, Յունիսի 5-ին, Գլենդէլի «Brandview Collection» անուամբ հանդիսասրահում տեղի է ունեցել ՅՅԴ Գլենդէլի Յայ Դատի Յանձնախմբի տարեկան ճաշկերոյթ-հաւաքը, որի ընթացքում ներկայացուել է յանձնախմբի ծաւալած աշխոյժ գործունէութիւնը, իրագործումներն ու ապագայ ծրագրերը: Միջոցառմանը, որին ներկայ են գտնուել ավելի քան 300 հիւրեր, մեծարուել են նաեւ Գլենդէլի հայկական համայնքի բարգաւաճմանը նպաստած անհատներ ու կազմակերպութիւններ: Յանդիսութեան ընթացքում ելոյթ է ունեցել Կալիֆորնիայի նահանգային սենատոր Ջակ Սքաթը, որը ջերմ խօսքերով անդրադարձել է Յայաստան կատարած իր այցելութեանը եւ մանրամասնութիւններ է յայտնել Յայոց Ցեղասպանութեան բանաձեւի վաւերացումը ապահովելու աշխատանքների մասին: Ելոյթ է ունեցեալ նաեւ Գլենդէլի քաղաքապետ Ջան Դրայմէնը, որը մասնաւորապէս դրուատել է Գլենդէլի Յայ Դատի Յանձնախմբի օգտաշատ գործունէութիւնը:



Գլենդէլում գործող Յայ կրթական հիմնարկութիւնը շարունակում է Յայաստանի, Արցախի եւ Ջաւախքի դպրոցներին օժանդակութիւն տրամադրելու իր աշխատանքը, որը սկսել է 2007 թուականից ի վեր: Սոյն ծրագրով հիմնարկութիւնը նուիրում է դպրոցական պիտոյքներ եւ քաջալերում ամերիկեան այլ դպրոցների, որ նրանք եւս մասնակցեն նպաստամատոյց այս աշխատանքներին: Նշենք, որ 2007 թուականին դպրոցական պիտոյքների 31 կապոցներ են ուղարկուել Յայաստան, որոնցից չորսը տրամադրուել է Ջաւախքի երկու դպրոցներին, իսկ մնացեալը բաժնուել է Յայաստանի 14 դպրոցների միջեւ:



Արդէն շուրջ մէկ տարի է, որ Լոս Անջելոսի UCLA համալսարանի մի խումբ ուսանողների ջանքերով լոյս է տեսնում «Armenian Chronicles» պարբերաթերթը, որի վեցերորդ համարը հրատարակուեց անցեալ շաբաթ: Թերթի նպատակն է արտայայտման ազատ բեմ ստեղծել ո՛չ միայն UCLA-ի, այլ բոլոր համալսարանների հայ ուսանողների եւ ընդհանրապէս հայ երիտասարդութեան համար, միաժամանակ տեղեկութիւններ հաղորդելով լուսանջելոսահայ

գաղութում տեղի ունեցող իրադարձությունների մասին: 8-ից 16 էջերով եւ հազար տպաքանակով ամբողջապէս անկողմնակալ սոյն պարբերաթերթին նեցուկ են կազմում զանազան կազմակերպութիւններ եւ թերթի ծախսերի մեծ մասը գոյանայում է գովազդային ծանուցումներից: Թերթը սպառւում է Գլխնէլ, Փասադինա, Յոլիվուդ քաղաքներում եւ Օրէնջ Բանութի շրջանում:

Այս լուրերը տրամադրւում են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: